

ներք ալն կերպ պէտք է աշխատեն նպաստելու մանկանց ինքնազարգացման, որ նոքա իրանց սեպհական փորձերն անեն և ևզրակացութիւն հանեն. պէտք է որքան կարելի է, քիչ պատմել և ստիպել նրանց, որ իրենք պատասխան դանեն: Մարդկութիւնը առաջ է գնալէլ միայն ինքնակրթութեան միջոցաւ, և թէ կեանքի մէջ յառաջադիմութեան մեծ քայլեր անելու համար իւրաքանչիւր մարդու մօք պէտք է զարգանայ մասամբ նոյն ճանապարհով, այդ միշտ հաստատուում է ինքնուս մարդկանց զարմանալի յառաջադիմութեամբ:

Ա. Գալեհագարեան.



ՄԵՐ ՄԱՄԱՒԻԼ.

Մի թոռցիկ ակնարկ ձգելով մեր ձեռքի տակ եղած թերթիւրի վերջին համարների վերայ՝ պէտք է փորձենք հարեանցօրէն զաղափար տալ ընթերցողներին, թէ ի՞նչ վիճակի մէջ է այժմ հայ մամուլը:—Առաջին տեղը կվայելէ հարկաւ հիմաւորց «Բազմավէպ»ին, որի պճնեալ երեսը վաղուց չէինք տեսել, քայց վերջին մի քանի շաբաթուայ մէջ իրար ետեւից ստացանք նոյեմբեր, դեկտեմբեր, — մարտ տետրակները: Այդ տետրակների ճիշտ ներքին նկարագիրը տալ նոյնչափ դժուար զործ է, որչափ դժուար է նոցա խմբագրող կաթոլիկ հոգեւորականների ներքինը նկարագրել. ուստի ստիպուած ենք աւելի արտաքին տարազը նկարագրելով քաւականանալ:—Ինչպէս յայտնի է, կաթոլիկ հոգեւորականութիւնը խիստ քաղմագան տարազ ունի. կարելի է ասել, չկայ տարազ աշխարհիս երեսին, որի

տակ կաթոլիկ հոգևորական չգտնուի. իսկ «Բազմավէպ»ը ժամանակակից, բողոքովին մոդեռն կաթոլիկ հոգևորականութեան մի առանձին տիպարն է՝ հայ ազգասիրի տարագով:

Առնենք վերջին համարը, որ մի տեսակ ջատագովական բնաւորութիւն ունի՝ առանձին ջանք է գործ դնում Մխիթարեան միաբանութեան անցեալը փառաւորելու եւ այդ փառքի շուքը ներկայի վերայ տարածելու. ուստի եւ քաւական բնորոշ գծեր կարող ենք գտնել նորա մէջ: Դնչքան բնորոշ է, օրինակ, նորա առաջնորդողը՝ իւր սքանչելի վերնագրով, որ է՝ «Կրթական օրօր մը»*, եւ իւր զմայլելի նախարանով, որի առաջին տողերն են. «Անապատին մէջ՝ ուր տառապանքի ժանգը անջնջելի է, կտեսնենք թաւալզւոր օրհասական մը, որուն ծակտին կքուին լքումի հովերը»... Ահա այսպէս ընթերցողի «ծակտին կքուին», կանցնին հրնչո՛ւն, ոլորո՛ւն քառերի մի ահագին շարան, իսկ երբ ուշքի գայ ու աչքերը տրորերով բաց անէ՝ կտեսնէ որ յիշողութեան մէջ մնացածը խիստ հասարակ ու անմեղ քան է. «գիտութեան տողտող մը, համալսարանի ուսուցիչ մը, Պ. Նալաւանդեան» ծրագրել է Զուիցերիոյ մէջ մի գիշերօթիկ կրթական հաստատութիւն բանալ, ուր պատասպարունն հայ ուսանողները եւ տեղական միջնակարգ ու բարձրագոյն ուսումնարանները յաճախեն. ի՞նչ պէտք, քանի որ Մուրատ—Ռափայէլեան վարժարանը կայ՝ գերադասելի յատկութիւններով, ժամանակին յարմար ուղղութեամբ:

Հ. Ս. Երեմ.-ի անուան հետ, որ ստորագրում է այսպիսի առաջնորդողներ եւ առհասարակ խմբագրական ուղղութիւն տալիս թերթին՝ ամէնից շատ կրկնուող անունն է այժմեան «Բազմավէպ»ի մէջ Հ. Ա. Ղազիկեան: Մի ջատագովական յօդուած եւս նա է գրել այս համա-

* Նոյեմբեր-ի առաջնորդողն ունի «Տարամերժեալներուն» վերնագիրը, իսկ Դեկտեմբեր-ի առաջնորդողի տեղ բռնող «Իսահակայ գենուածն» լոյս է տեսել «Արարատ», 1901, մարտ. էջ 133, որ և հարկէ չի յիշուում:

րում՝ «Երիցեան եւ Բագրատունի» վերնագրով, որի մէջ դատաւիտում է հանգուցեալ Ա. Երիցեանի 1882 թուին յայտնած մի կարծիքը թէ՝ «Վենետիկցիք իրանց ջանքով մեծապէս նպաստեցին Հայկաբանութեանը», բայց «չվերադարձրին Ոսկէ դարը»:—Նա զոհ չէ Երիցեանի եւ ուրիշների Մխիթարեաններին ընծայած քաղմատեսակ արժանիքներով. զոհ չի լինի մինչեւ իսկ, երբ նորա մտածէին իրեն հետ, «որ եթէ Մխիթար ու Մխիթարեանք չըլլային, հրչափ կընար զարգացած ըլլալ մեր լեզուն, եթէ եւ բոլորովին չկորսուած»: այլ պահանջում է խոստովանել միաբերան, որ ոչ մի հայ հեղինակ՝ «ս. Սահակէն մինչեւ ուր որ կուգէ», չի գրել այնպիսի «սքանչելի, հրաշալի, հրաշափառ, շնաշխարհիկ, մոգիչ, սրտաճմլիկ, չքնադագիւտ, անգիւտ, վսեմափառ, երկնային, հրեշտակային, զմայլելի, կայծակոտ, եւլն եւլն» տողեր, ինչպէս Հ. Ա. Բագրատունին. որ ուրեմն Մխիթարեանք ոչ միայն վերադարձրել, այլ նաեւ գերազանցել են Ոսկէ դարը:

Երկու ամիւնները՝ Հ. Ս. Երեմ. եւ Հ. Ա. Ղազիկեան միեւնոյն ժամանակ «Բազմալէալ»ի քանաստեղծներն են: Վերջինս այս համարի մէջ միայն երկու ոտանաւորներ ունի. միւսների մէջ հատուած հատուած տալուում է նորա «Տանդէի Աստուածային կատակերգութեան» թարգմանութիւնը, տալուել են առատութեամբ ուրիշ քանաստեղծական երկասիրութիւններ, որոնցով նա երեւի իրեն անմիջական ժառանգ է համարում Հ. Ա. Բագրատունու եւ ինքնագոհութեան երջանիկ ըուպէներին մտածում, թէ ս. Ղազարու կղզիէն անտին—«մինչեւ ուր որ կուգէ», չի գրտնուել երբէք մի հայ մարդ, որ գրած լինէր այսպիսի «չըքնաղ, սքանչելի, հրաշագան» տողեր.

«Եղի՛ր արեւ, տաքցո՛ւր, տեղա՛ նըշոյլ քիւր,
«Եղի՛ր համակ կենդանութեան լոյս աղբիւր,
«Յանէ ցըրուէ հոս հոն խընծիղ, թոյր եւ քոյր,
«Չես կընար զոհ ընել տըհաճն անհամբոյր»:
Իսկ Հ. Ս. Երեմ. իրելու յառաջադէմներու յառա-

Ջաղէմն ու ազգասէրներու ազգասէրը՝ իւր քանաստեղծական խանդը հանգաւոր տողերով չի կաշկանդում, օտար քուրաստաններից ծաղիկներ չի փնջում, այլ «ազգավէպ»եր է գրում, եւ աշխատում — «հին ու մոռացուած դիցազնական եւ հեթանոսական պատմութիւնը վէպի հրապրելով մատչելի ընել ներկայ ամբողջ հայ սերունդին», «հայրունի եւ ազգաշնորհ զաղափարները հրաւառել»: Ահա մի փոքրիկ նմուշ այդ հրավառումներից. (Տալուորիկցի մերձիման հիւանդ մայրը խօսում է իւր մատաղահաս դստեր հետ). «Ա՛ղջի, իմ վիճակը գէշ է. ես երագիս տեսայ, որ Տալուորիկի սարերը կը քարձրանային, ես կը լողայի ալիւրի նման ճերմակ լճի մէջ, ես տեսայ արքայութեան պատուհանին մէջ ս. Կարապետ, որ բռնած էր ծիրանի գօտին եւ անոր ծայրը կապած էր մէկ գեղեցիկ սապատ՝ մէջը ս. Գրիգոր. մատաղ եղներմ՝ մեր սուրբ հայրապետին. ան մօտեցաւ ինծի, արի երթանք ըսաւ եւ դրաւ զիս սապատին մէջ. ծիրանի գօտին քաշուեցաւ, ես կը քարձրանայի սուրբ հայրապետին հետ, ես կը քարձրանայի երկնքի ամպերէն վեր, ես կը տեսնէի ամէն քան ճերմակ, ամէն քան լոյս, քոյ. ես քարձրացայ դեռ վեր, հրեշտակներու զլուխներուն վրայ կոխելով մօտեցայ Աստուած պապային» ... Բաւական է կարծեմ. այս տեսակ քանաստեղծութիւններով հարուստ են «Բազմավէպ»ի բոլոր համարները. քայց խոստովանում ենք՝ մենք նոյն իսկ մի համարինը կարդալու քաջութիւն չունեցանք: Այո՛, մենք այն «անհամբոյր տրհամ»ներից մէկն ենք, որ թոյլ չենք տալիս Մխիթարեան քանաստեղծների պեգասին մեր «զլուխներուն վերայ կոխելով» անցնելու. ո՛չ էլ յօժար ենք, որ «մեր սուրբ հայրապետին» սապատի մէջ դնեն՝ ինչքան կուզէ գեղեցիկ սապատ լինի, ու յետոյ այդ սապատից իսկական յարդ ցանեն մեր զլխին, երեւակայելով, թէ «խընծիդ, թոյր եւ քոյր» են ցանում: Մենք ՚չ լուսաւորող մտքի եւ ո՛չ սիրտ տաքացնող զգացմունքի ամենափոքր նշոյլն ենք զոնում՝ այդ տղայական խաղերի մէջ:

Սակայն այժմեան «Բազմավէպ»ը միայն «Տալուորիկի շրթայաշար սարերու սուր քերնէն» նուագելով չէ յառաջա-

դէմների կարգն անցել եւ ուխտեալ յառաջադէմների կողմից փառքի դափնիներ վաստակել. ընթերցողը կգտնէ նորա մէջ յօդուածներ նաեւ այնպիսի նորագոյն գիտութեան, յառաջադիմութեան ու ազատամտութեան «թոյր բուրոյ» վերնագիրներով, ինչպէս. «Բ. Վերքով ախտաքան, ազատամիտ, աշխարհավար», «Ժագումն մարդոյ», «Օղային ճանապարհորդութեան խնդիրը», եւն: Ի՞նչ է գրուած նրանց մէջ՝ անհնարին է մեզ իմանալ, որովհետեւ ժամանակակից գիտութեան վերաբերեալ տեղեկութիւններ ստանալու համար ս. Ղազարի կղզին դիմելու պարզամտութիւնը չունինք:

Ուրիշ են ի հարկէ Հայոց պատմութեան ու քանասիրութեան վերաբերեալ գրուածներ, որոնք անցեալում «Բագմավէպ»-ի իսկական փառքը ու նորա անունը բարձրացնողներն են եղել եւ այժմ՝ դժբաղդաբոր այնչափ փոքր ու խեղճ տեղ են բռնում նորա մէջ: Եիշած երեք համարներում՝ գրտնում ենք «Գոթան երգեր», «Հայ հեթանոս քանաստեղծութիւնը», «Հայ կաթողիկոսութիւն» (շաքահարելի) յօդուածները, որոնցից մանաւանդ առաջինի մէջ փայլում է դեռ Մխիթարեանի հայ գրականութեան հմտութիւնը, քազմակողմադի մատենագրական տեղեկութիւնների առատ պաշար ունենալը: Բայց ինչպիսի՞ նիւթերի վերայ է գործադրուում այդ հմտութիւնը, այդ հետաքնին աշխատասիրութիւնը, եւ ի՞նչ եղանակով:—Մի քանի սրամիտ դիտողութիւններ աւելացնելու համար քննութեան են առնուում այստեղ անթիւ անգամ՝ բոլորած խնդիրներ, մինչդեռ այնչափ նիւթ կայ դեռ մեր գրականութեան մէջ, որին քանասէր գրիչ չի դիպել: Եւ որ աւելի ցաւալին է՝ բուն պատմագիտական, ժամանակակից քննադատութիւնը գրեթէ քացակայում է այս ուսումնասիրութիւնների մէջ: Նոքա առանց իսկական քննութեան, իբրեւ պատմական ճշմարտութիւն են ընդունում դարձեալ, որ «Ս. Գրիգոր հայ ազգը լուսաւորած ժամանակ, պարծանք մը կըխաւարեցնէր անկէ— փառքը ազգային քանաստեղծութեան մը, ազատութեան դարերու մէջ փթթեալ, հարազատ ծնունդ հայ մտքի», որ «Գրիգոր Մագիստրոսի որդին Վահրամ լուսաւորչի տոհմէն սերած» էր, որ Հայոց հայրապետական

աթոռը Վաղարշապատից առաջ Աշտիշատում է եղել, որ «ոչ որ պիտի կարենայ ժխտել Լուսաւորչի Կեսարիոյ մետրապոլիտէն ձեռնադրուելը», «որ Արիստակէս՝ թէպէտ եպիսկոպոս՝ Կեսարիա զացած, կամ Կեսարիոյ մետրապոլիտին հաւանութեամբ կաթողիկոսական պաշտօնը վարած ըլլայ», որ եթէ մի Մխիթարեանի հոյակապ «ուսումնասիրութեան» մէջ ուրիշի փաստերի դէմ հակառակ կարծիքներ են յայտնուել, այդ փաստերն «արդէն կասաւելապէս ոչնչացած են», եւլն: Այնուամենայնիւ ցանկալի էր, որ զոնէ այս ձեւով հայ գրականութեան համար աշխատողներն աւելի քազմաթիւ լինէին ու աւելի տեղ քոնէին, եւ տարօրինակ է, թէ ինչո՞ւ Հ. Բ. Սարգսեան եւ իրեն շրջապատող բուն հայաստանցի եւ հոգւով հայ Մխիթարեանները մի կողմ են քաշուել եւ ասպարէզը մնացել է Հ. Երեմ.-ներին:

Այսպիսի յեղաշրջման քիչ չէ նպաստել անշուշտ այն հանգամանքը, որ հին դպրոցի աշքի ընկնող ներկայացուցիչներից վերջին մի քանի տարուայ մէջ շատերը պակասեցին: Նոյնմանք ու դեկտեմբեր տետրակների մէջ միայն գտնում ենք միաբանութեան երեք նորոգ հանգուցեալ անդամների մահացուցակը՝ Հ. Հ. Իոսավէրդեանց, Ռուսինեան, Մէրժանժեան, որոնցից առաջինը մանաւանդ յայտնի էր իւր լուրջ գրական աշխատութիւններով: Իսկ այն քոլոր անունները, որ այժմ «Բազմավէպ»ի զանազան յօդուածների տակ կարդում ենք, գրեթէ նոր են մեզ համար, այս 5—6 տարուայ ընթացքում հրապարակ ելած, եւ եթէ ուրիշ տեղերում նորի նին յաջորդելը նշանակում է մի քայլ դէպի յառաջ՝ դէպի քարուքում, այստեղ դժբաղդաբար հակառակն ենք տեսնում: Յիրաւի յառաջադէմ եւ ժամանակի հետ ընթացող երեւալու ձգտումը թերթի ամէն մի տողի մէջ փայլում է՝ շապկից սկսած մինչեւ վերջին տառը, քայց պակասում է մեր ժամանակի համար պահանջուած գիտական կարողութիւնն ու շիտակութեւնը. եւ այն, ինչ որ կարճատես եւ դիւրախար աշքերին իրեւ լոյս եւ յառաջադիմութիւն է երեւում՝ անշահ պաճուճանք ու սեթեւեթութիւն է միայն մի քիչ մօտիկից նայողի համար՝ չափազանց խնդճ քան, արգահատելի

լինելու չափ խեղճ:

Ամէնից աւելի նկատելի է այդ խեղճութիւնը գրա-
խօսական քաժնի մէջ, ուր Յարութիւն Թումանեանցի
նման բանաստեղծի «գրեթէ ամէն նուագ հանճարեղ
շարժառիթ մ' ունի, եւ ամէնքն ալ նուիրուած են անծա-
նօթի մը (?)», «էմ. քահանայ Նազարեանց տետրակ մը
կը նուիրէ հայ մանկութեան. ոտանաւորներ, պարզ ու
սիրուն ... շատ իմաստասիրօրէն». իսկ երբ խօսքը «Մշա-
կ»ին է հասնում—քոլոր խմբագրականները կամ «կրա-
կոտ» են, կամ «ցնցող», Լէօյի քանասիրականը «համեղ»,
Հ. Առաքելեանի լուսանկարը «գեղեցիկ», եւ մինչեւ անգամ
Վրժինի նուէրները «հանճարեղ»: Հարկաւ, եթէ Թումանեանց
հանճարեղ է, Վրժին հանճարեղ, Գր. Բալասեան եւ ընկ.
հանճարեղ,—ի՞նչ զարմանք այլ եւս, որ Հ. Ղազիկեաններն,
այսպէս չորս քոլորը հանճարեղներով շրջապատուած, իրենք
եւս հանճարների հանճար՝ ինկի ծխի ամպերի վերայ կսաւառ-
նեն ու կերելակայեն, թէ իրենց պէս հանճարների երկու դար
շարունակ ս. Ղազարի կղզուց տարածած լոյսն է, որ պահել
է Հայոց լեզուն, գուցէ եւ ողջ Հայութիւնը՝ կորստեան
վտանգից:

Սակայն այն արժանայիշատակ Մխիթարեանները, որոնք
սեփական լոյս եւ ինքնուրոյն արժանիք ունեցել են, որոնք
կէս դար ու մի դար առաջ շատ կարելոր գործ են կատա-
րել եւ մեծ ծառայութիւն մատուցել հայրենի գրականու-
թեան՝ ի պատիւ իրենց, այդպէս անհամեստ ու վառ երեւակա-
յութեան տէր չէին. լուրջ աշխատանքի, եւ ո՛չ թէ դատարկ
խօսքի՝ մարդիկ լինելով, նոքա գիտէին գնահատել ուրիշ
իրենց նման մշակների աշխատանքը, եւ չէին ուրանայ ան-
շուշտ, որ այդպիսի մշակներ հայկական անդաստանը շատ
շատ է ունեցել: Ուստի չենք կարծում, որ նոքա շատ գոհ
մասն, եթէ այսօր զուիս քարճրացնեն գերեզմանից եւ
տեսնեն, թէ ինչպէս ապաշնորհ յետնորդները շահագոր-
ծում են նոցա անունները եւ փոխանակ արդար վաստակով
նոր փառք աւելացնելու նոցա անուան վերայ, ամէն տե-
սակ կասկածելի միջոցների են դիմում, անվայելուչ

դրուսաներով նսեմացնում՝ նոյն իսկ այդ փառքը՝ նորա ստուերում իրենց խեղճութիւնը թագցնելու համար: Բայց թէ որչափ անկայուն է այս ընթացքը եւ փոանգաւոր՝ պէտք է ծածուկ չլինի նաեւ Միաբանութեան փոքր ի շատէ խոհուն անդամներից: Մենք հիմք ունինք ենթադրելու, որ այդպիսիների համար եւս դիրեկտն չեն իրենց յառաջադէմ միաբանակիցների ազատամտական հովերը: «Բազմավէպ»ի նոյեմբեր հ.-ի «նամականի» վերնագրով խմբագրական պատասխանեաց երկար շարքում կարդում ենք. «Տըփ-խիս. Մեծարգ. Հ. Գ. վ. Ն. — Պաշտ. Նահապետին սուրբ մեռելին բողոքն էր այն, որուն արժանի էին այդ դիմակաւորները, ատոնց համար չենք կրնար քաժնել անքաժան խմբագրութիւնը — անաչառութիւնը...» Այս մութ խօսքերի մէջ, որոնց շարունակութիւնն աւելի եւս մանուածապատ է՝ մենք կարդում ենք վատ քողարկուած խուսափումն յիշեալ Մեծարգոյ Մխիթարեաններից մէկի լուրջ ազդարարութիւններից:

Ի՞նչն է արդեօք պատճառն այդ տեսակ վերաբերմունքի. մի՞թէ յիրաւի յառաջադիմելու, քաց ճակատով ճշմարտութիւնը քարոզելու ձգտումը — անաչառութիւնը: Ո՛հ, այո՛, չափից դուրս անաչառ է «Բազմավէպ»ի այժմեան խմբագրութիւնը. ս. էջմիածինը մանաւանդ, եւ յատկապէս նորա պաշտօնական ամսագիրը՝ շատ պատճառներ ունին այդ անաչառութիւնից շնորհակալ լինելու: Նա փայլում է նոյն իսկ այնպիսի մանր քաների մէջ, ինչպէս օր. երբ Հայոց աչքի ընկնող դպրոցական հաստատութիւնների՝ Սանասարեան վարժարանի, Ներսիսեան դպրոցի եւլն, անունները տրուում են, ս. էջմիածնի Ճեմարանը իբրեւ չեղած է նկատուում. երբ մի զուտ պատմական խնդիր է քննուում, որի վերաբերմամբ «Արարատ ի մէջ եւս գրուել է եւ որոշ տեսակէտներ պարզուել՝ քարոք է համարուում լռութիւն պահել այդ մասին. երբ 1902 թ.-ին լոյս տեսած «Պարբերական ազգային յօդուածներ»ի ամբողջ ցանկն է տպուում՝ դուրս է գալիս, որ «Արարատի մէջ ի՛շ քանասիրական, ի՛շ գրախօսական, ի՛շ պատմական, ի՛շ գիտական, ի՛շ աշխար-

հազարական նիւթ չէ եղել, այլ միայն մի «Բանաստեղծական» յօդուած՝ «Ողբացող Խորենացին»։—Առանց հաշուի չէ անշուշտ այս ամէնը. քանի որ ս. Էջմիածնին ամենամօտ շքր-ջաններում իսկ շատերը դեռ միամտաբար ընդունում ու հաւատացնում են, թէ Վենետիկի Մխիթարեանք ու նոցա «Բազմավէպ»ը անհասանելի մեծութիւն են ս. Էջմիածնի միաբանութեան ու «Արարատ»ի համար, ինչո՞ւ իրենք Վենետիկցիք չհաւատան, որ այդպէս է, եւ արժան չհամարելով մեզ յիշել՝ կարծեն թէ հրապարակն ուրեմն իրենց կմայ եւ իրենց անզուգական արժանիքների մասին հաստատուած նախապաշարումներն աւելի երկար ժամանակ կսլահուին։

Հ. Ս. Երեմ։ «Արարատ»ն անուշադրութեան մատնելով հանդերձ՝ քարեհաճել է մի տեղ ուղղել «հարցում մը Արարատ-ի սրագլուխ խմբագրին»,—թէ արդեօք մինչեւ ե՞րբ պէտք է սպասեն Աստուածաշունչի տպուելուն։ Կատարասխաններ, մինչեւ այն ժամանակակէտը, որը որոշել կախուած չէ «Արարատի սրագլուխ խմբագրէն»։ Ամէն գործ հեշտացնելու անընդունակ եւ րեկլամներ անելու անսովոր լինելով մենք համբերութեամբ կսպասենք, որ մեր շուրջը կատարուած դժուարին գործերը մի օր իրենց արդիւնքը կոյրերին անգամ ցոյց տան, եւ ապա թէ գնահատեն այն՝ «Բազմավէպ»ի խմբագրից աւելի սրամիտ գլուխներ։ Առ այժմ՝ իւր թոյլտուութիւնն ենք խնդրում մի հարցում եւս մեր կողմից ուղղելու. ե՞րբ արդեօք Վենետիկի Մխիթարեան Հայրերը կսկսեն այն անկեղծ քարեկամական խորհուրդը լսել, որ վերջին ժամանակները շատ անգամ նոցա տուել են եւ որ Հ. Ս. Երեմ ինքն ուրիշներին է տալիս. «Մինչեւ որ Եւրոպայի մէջ կրթուած վարժապետներ, կրթիչներ ու դաստիարակներ շանցնեն մեր կրթական հաստատութեանց գլուխը... անհնարին է որ պահանջուած քարեշրջում մը իրագործուի»։ Իսկ ս. Ղազարու վանքը բարեօրջումների շատ մեծ կարիք ունի.— հաւատացէ՛ք, Հ. Ս. Երեմ, որ ունի։ «Դիցազներգու քանաստեղծ Գրիգոր Բալասեանին խրախուսելով» եւ փոխադարձաբար զովասանական ուղերձներ ընդունելով Դուք Ձեր բուն

հայրենիքի մէջ Ձեր Միաբանութեան վարկը պահպանած ու բարձրացրած չէք լինի: Գիտենք, թէ ինչպիսի ծանր ճեղքի տակ էք Դուք գտնուում, ինչպէ՞ս դժուար է Ձեզ բարեբընդում-ների ենթարկուելը. բայց գոնէ տղայական հրապոյրներով մի՛ խաբուէք—եւ մի՛ կարծէք թէ ս. Էջմիածնի անուանարկումը Ձեզ համար փառք ու պատիւ է: Մենք պատրաստ ենք միշտ արժանի յարգը տալ Ձեր Միաբանութեան թէ իւր փառաւոր անցեալի եւ թէ ներկայում՝ կատարած իւրաքանչիւր դրական, հայրենասնուէր, օգտակար գործի համար. մինչդեռ Ձեր փրուն ճառերը կորեկի նշանակութիւն չունին մեր աչքում:

Վիեննայի Մխիթարեանց «Ամսօրեայ Հանդէսի» մասին շատ քիչ բան ունինք ասելու: Դժբաղդաբար նա չմնաց այն բարձրութեան վերայ, ուր մի քանի տարի առաջ հասցրել էին Միաբանութեան այնպիսի կարող ներկայացուցիչներ, ինչպէս Հ. Հ. Տաշեան, Գալէմբեարեան, Մէնելիշեան, բայց համետ եւ ժրջան կերպով շարունակում է իւր օգտակար գործը՝ ի մի ամփոփելով հայկական բանասիրութեան վերաբերեալ օտարազգի ու հայ գրիչների աշխատութիւնները, ծանօթացնելով դուրսը լոյս տեսած այդպիսի աշխատութիւնների հետ: Մեր ձեռքին է միայն վերջին «մարտ» համարը, որ սկզբում, առանձին թերթով, մի ուղերձ եւ մի կենսագրական ակնարկ է նուիրում Լեւոն ԺԳ.-ի քահանայապետութեան 25 ամեայ յորելեանի յիշատակին: Հաշտուել այն ոգու հետ, որ Քրիստոսի ծառայից ծառային՝ մի խեղճ մահկանացուի—«Առ Հայրդ Հովիւդ Թագաւորդ Պայծառ լոյսդ երկնից» կոչումով է դիմում, —մենք ի հարկէ երբէք չենք կարող. բայց Գեւգէրի, Պետերսընի գրուածքների թարգմանութիւնը, Հ. Աճառեանի լեզուաբանական յօդուածը, «Ժովբի կաթողիկոսարանը», «կենսագրական»ները մնայուն ստացուածք են հայ գրականութեան համար, ինչպէս եւ «Նոր հրատարակութիւնը» եւ «Ժաղկէփունջ»

վերնագրով տեղեկութիւնները՝ առանց սեթեւեթի, առանց աւելորդ եւ անտեղի դատողութիւնների, — իրական ծառայութիւն: Այսպիսով ներկայ համարի գրեթէ քոլոր նիւթերն իրենց արժէքն ունին եւ դարձնում են թերթը ծայրէ ի ծայր արժէքաւոր՝ իր համեստ սահմանների մէջ: Յանկալի էր միայն, որ յօդուածներն այդչափ մանր կտրտուած եւ անսահման ժամանակով շարունակելի չլինէին. այնպիսի հատուած է դրուում երբեմն մի համարի մէջ, որի սկիզբն ու վերջը գտնել եւ մի քան հասկանալ կարելի չէ:

Սակայն մեր խօսքն այնչափ երկարեց, որ ստիպուած ենք միւս հայ թերթերն ուրիշ յարմար առթի թողնելու, եւ պիտի քաւականանանք առ այժմ՝ միայն «Ազգագրական հանդէսն» եւս յիշելով: Նոյնը, ինչ որ «Հանդէս ամսօրեայ»ի համար ասացինք—ծայրէ ի ծայր արժէքաւոր—, աւելի մեծ իրաւունքով սորա վերջին IX զրքի մասին ասել կարող ենք, որ լոյս է տեսել անցեալ տարի, քայց մեր ձեռքը հասել է քաւական ուշ: Մենք չենք յիշում, որ մի ուրիշ հայերէն հանդէս թերթելիս աւելի գոհութիւն զգացած լինինք, քան սյս գիրքը մեզ պատճառեց: Հայ ժողովուրդը իւր ներքին եւ արտաքին նկարագրով, իւր սովորութիւններով, իւր մտքի ու զգացմանց արտադրութիւններով, իւր խաղերովն ու հեծեծանքներով—հայ շունչ իւրաքանչիւր էջում—, եւ այդ քոլորը գովելի եռանդով ժողովուած, ամենայն խնամքով խմբագրուած, գեղեցիկ կերպով տպուած ու պատկերներով զարդարուած,—ահա՛ մի իսկապէս գնահատելի գործ:

Ա. Վ.